Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
նոյեմբերի 13-ի N 1441 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ

I . ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքի կենդանական աշխարհի պետական կադաստրի վարման կարգը։

2. Կենդանական աշխարհի պետական կադաստրը (այսուհետ՝ պետական կադաստր) կենդանական աշխարհի օբյեկտների իրավական ռեժիմի, քանակական ու որակական բնութագրերի, վիճակի, բնապահպանական, մշակութային և տնտեսական արժեքների, հանրապետությունում ու մարզերում տարածվածության, պաշարների և օգտագործման մասին տեղեկությունների ու փաստաթղթերի համակարգ է։

3. Պետական կադաստրի վարումը նպատակ ունի բացահայտելու կենդանիների տեսակների ու համակեցությունների, դրանց ապրելավայրերի քանակական և որակական փոփոխությունները։

4. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գտնվող անտառներում և անտառային հողերում պետական հաշվառումն ու պետական մոնիթորինգն իրականացվում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից, և ստացված արդյունքները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ կենդանական աշխարհի պետական կադաստրի վարման նպատակով։

5. Պետական կադաստրի վարման համար կարող են օգտագործվել գիտական ուսումնասիրությունների, պետական հաշվառման և մոնիթորինգի, կենդանական պաշարների օգտագործման մասին պայմանագրերի և այլ տվյալներ։

6. Պետական կադաստրը վարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցների հաշվին։

7. Պետական կադաստրը կազմված է հետևյալ բաժիններից՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքի վայրի կենդանիների տեսակային բազմազանություն (անողնաշարավոր, ողնաշարավոր).

2) կենդանական աշխարհի օգտագործում.

3) կենդանական աշխարհի պահպանություն, վերարտադրություն։

8. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված պետական կադաստրի բաժինները ներառում են կենդանական տեսակի մասին հետևյալ տեղեկատվությունը՝

1) կարգաբանական պատկանելությունը և գիտական անվանումը (հայերեն, լատիներեն), կարգավիճակը՝ Հայաստանի Հանրապետության կարմիր գրքի և Բնության պահպանության միջազգային միության (IUCN) դասակարգումը.

2) թիվը բնության մեջ և անազատ պայմաններում.

3) կենդանատեսակի տարածվածությունը՝ աշխարհագրական և վարչատարածքային.

4) պաշարը՝ աշխարհագրական որոշակի տարածքում առկա կենդանական տեսակ-ների և համակեցությունների օգտագործման ենթակա քանակությունը.

5) բնակմիջավայրերը.

6) տեղեկատվության սկզբնաղբյուրը.

7) սպառնալիքները.

8) քաղաքացիներին և իրավաբանական անձանց օգտագործման տրված վայրի կենդանիները (օգտագործման իրավունքի և տեսակի, թույլատրված ու փաստացի).

9) տեսակի պահպանության ու կայուն օգտագործման միջոցառումները՝ առկա և նախատեսվող։

II. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Պետական կադաստրի վարման տարեկան ծրագրերն օրենքով սահմանված կարգով մշակում է լիազոր մարմինը։

10. Պետական կադաստրի տվյալները գրանցվում են գրանցամատյանում, որի օրինակելի ձևը հաստատվում է լիազոր մարմնի կողմից։

11. Պետական կադաստրում տվյալների գրանցումը մշտապես իրականացվող գործընթաց է, որն ապահովում է տվյալների համալրումը, դասակարգումը, պահպանումը և փոփոխությունների օպերատիվ մուտքագրումը։

12. Պետական կադաստրի վարման գրանցամատյաններում ներառվում են նաև կենդանական աշխարհի պետական հաշվառման տվյալները։ Կենդանական աշխարհի պետական հաշվառումն իրականացվում է պարբերաբար՝ ոչ ուշ, քան յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ։

13. Պետական կադաստրի վարման գրանցամատյանները վարվում են ինչպես փաստաթղթային, այնպես էլ էլեկտրոնային ձևով, որոնց վարման ժամանակ պետք է ապահովվի դրանց համադրելիությունը։ Փաստաթղթային և էլեկտրոնային կրիչների միջև տվյալների տարբերության դեպքում հիմք է ընդունվում փաստաթղթային տարբերակը։

14. Պետական կադաստրի վարման գրանցամատյաններում տվյալների մուտքագրումը և փոփոխությունն իրականացվում են դրանք ներկայացվելու օրվանից մեկ ամսվա ընթացքում։

15. Պետական կադաստր վարող լիազոր մարմինը ճշգրիտ մուտքագրում է կենդանական աշխարհի հաշվառում և ուսումնասիրություններ իրականացնողների ներկայացրած փաստաթղթային և էլեկտրոնային տվյալները։

16. Սույն կարգի 8-րդ կետում նշված պետական կադաստրի ամփոփ տվյալները համարվում են պաշտոնական և կարող են հիմք հանդիսանալ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ իրենց լիազորությունների սահմաններում որոշումներ ընդունելիս։

17. Պետական կադաստրի տվյալները կարող են տրամադրվել տեղեկանքների, հաշվետվությունների, գրաֆիկական և այլ նյութերի տեսքով։

18. Իրավաբանական անձինք և քաղաքացիները պետական կադաստրի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով դիմում են լիազոր մարմին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ